

դեռ 1) . Պօղոսի զանգակները կը զարնէին , և քաղաքին սրնգահարները ազգային երգեր կ'երգէին եկեղեցւոյն կապարայարկին վրայ : 2) Ինուորականաց գունդը հրացաններ կը պարպէին , և հանդիսականք ծափաձայն ցնծութիւն աս յաղթանակը կը կատարէին :

Արչափ մեծ եղաւ թագուհւոյն ցաւը այսպիսի տեսարան մը տեսնելուն՝ իր դաւանած սուրբ հաւատոցը դէմ : Ակրցաւ յերկարակեաց ըլլալ այսպիսի վշտերու վրայ , ու 1669ին մեռաւ բարեպաշտութեամբ : Իսկոր Վաղղիա՝ որ այնպիսի դշխոյի մը վշտաց կարեկից եղեր էր , լացաւ թէ դժնդակ կեանքը և թէ վաղահաս մահը . և ատենին մեծ հանձարը՝ Պոսիւէ , գեղեցիկ ու հռչակաւոր արձանականով մը անոր անունը անմահացուց . և ժամանակակցացը արժանապէս սիրելի եղող անձին յիշատակը՝ բոլոր ապագայից առջև ալ զարմանալի ըրաւ իր ճարտարախօս լեզուովը : Իսկ հռչակաւոր արձանականին ճաշակ մը տանք՝ գեղեցկագոյն հատուած մը թարգմանելով :

Մահ Հանրիեդի դշխոյի :

“ Իսորհեցարուք միանգամ ընդ մեծաւ մեծ իշխանութիւնսն ընդ այնոսիկ յոր զական ՚ի վեր կառուցեալ պշնումք . այն ինչ ընդ նոցա ձեռամբ զգողանի հաւրեալ սասանիմք մեք , և ահա հարկանէ զնոսա տէր զի զմեզ ընդոստեցուցէ : Իարձրութիւն նոցա պատճառք հարուածոյն են . և այնչափ խստիւ գնացեալ Եստուծոյ ընդ նոսա , զի առ ՚ի խրատ այլոց ՚ի մարդկանէ՝ ոչինչ ինայէ զնոսա պատարագել : Ի՞նչ քրթմնջիցէք ինչ , քրիստոնեայք , եթէ ՚ի սոյն մեզ հրահանգութիւն և ինքն իսկ ընտրեցաւ դշխոյն . չիք աստ դժնդակ ինչ վասն նորա . քանզի որպէս և ՚ի վերայ հասեալ տեսանիցէք , հարուած որ մեզ ՚ի խրատ կրթիցի՝ յԵստուծոյ ձեռաց , ՚ի փրկութի նմա տնօրինեալ է : Պարտ իսկ էր մեզ աներկբայ ընդ մերս լինել ոչեութիւն , այլ եթէ սիրտք մեր զսի-

րով աշխարհիս հարեալ և յանկարծա . հաս ինչ հարուածոց ունիցին պէտս , մեծ իսկ և ահաւորագոյն ուրեմն է սա : Ի՞նչ դիշեր աղիտաբեր , գիշեր սոսկալի , յոր յանկարծ իմն իբր զշանթ որոտընդոստ ահաւոր հնչեաց բարբառ . “ Եւ աւանի տիկինն . . . մեռաւ տիկինն , : Ի՞նչ որ ՚ի մէնջ ՚ի լուր ձայնիդ ոչ սասանեցաւ , իբրու այն եթէ առն իւրաքանչիւր հասեալ էր ՚ի վերայ կորուստ : Ի նախկին անդ շշուկ տարածամ աղետիցն խուռն յամենուստ գրոհ տան ՚ի Ենքլու . գտանէն անդ յարհաւիրս վըհատութեան զամենայն բայց ՚ի սրտէ դըշխոյին . աղաղակք յամենայն կողմանց լինին լսելի . և ամենայն ուրեք ցաւք և յուսահատութիւն և արհաւիրք մահու : Իւրբայն և թագուհին , և իշխանն արքունի , նա և արքունիք համօրէն և ամենայն ժողովուրդք լքեալ ընդարմացեալ , և ոչ մի յոյս ակնկալութեան է ՚ի նոսա . և թուիմ տեսանել զմարգարէին լցեալ զառած , եթէ “ Իսապաւորն լացցէ , լքեալ բեկցի սիրտ իշխանին , և ձեռք ժողովրդեան անկցին ՚ի ցաւս և յապշութիւն , :

“ Իսկ ՚ի զուր հեծեն ազատք և ժողովուրդք . ՚ի զուր իշխանն և ինքնին իսկ արքայ գիրկս զտիկնաւն արկեալ փարիցին . ՚ի դէպ իսկ էր ընդ Եմբրոսիոսի սրբոյ գոչել և նոցա եթէ “ Իիրկս ածէի մինչ կորուսեալ էր իմ զոր ինչ կալեալն ունէի , : Ի խանդաղատալից գըրկախառնութեան անդ սրանայր տիկինն , և զօրաւորագոյն ՚ի մահուց՝ յարքունի բազուկսն անդ կորզէր յափշտակէր ըզնա ՚ի մէնջ :

“ Իսկ զիա՞րդ . կայր մնայր ապա նմին այս վախճան երագահաս . ՚ի բազումս ՚ի մարդկանէ առ սակաւ սակաւ փոփոխութիւնքն լինին . և ՚ի յետին իւր ՚ի հարուած յաճախագոյն պատրաստէ զնոսա մահ : Իսկ բամբիշն յառաւօտէ անց յերեկոյ , իբրեւ զխոտ ՚ի դաշտի : Իսկ ինքնին գիտէք եթէ քանիօն շնորհօք փթթեալ ծաղկէր նա յառաւօտու . տեսաք մեք զիա , և ահա յերեկոյին չորացեալ էր . ՚ի տիկին անդ ուրեմն գոյր

ճշգրտեալ ճշմարտել որչափ ինչ անձեղէնն բանք առաւելութեամբ իմն ըզմարդկայնոցս ցուցանեն զյեղյեղուն անհաստատութիւն : . . .

„Նաւասիկ տիկինն այն մեծասիրտ, ահա սքանչելին այն և փարեղի . ահաւանիկ գործն մահու . ահա նշխարքն այն որ փոքր մի ևս և յաչաց մերոց ծածկեսցին . ստուերն այն փառաց 'ի չիք դառնայ, և տեսցուք մեք զնա զի և 'ի տխրագին զարդուց աստի մերկ կողուպուտ, իջցէ 'ի վայրսն այն խաւարի, 'ի տունն անդր որ ընդ երկրաւն է, զի ըստ Յորայ բարբառելոյ, 'ի հող անդր նրն ջեսցէ, ընդ մեծամեծս երկրի, ընդ թագաւորս և ընդ իշխանս ընդ այնոսիկ որ ոչ ևս են, յորոց միջի հազիւ ուրեմն գուցէ նմա զտեղի գտանել մինչ անձկացեալ վայրացն, և մահ կազմ և 'ի պատրաստի կայ և ևս ընուլ զնոսա : Նյլ դեռ ևս 'ի պատիրս խաբէութեան ունի ըզմեղ աստէն երեւակերպութիւն . չիք մահու թողուլ մեզ զետեղակալ ինչ մարմին, և ոչ այլ ինչ տեսանեմք անդանոր՝ բայց զտապանս՝ որ ձև իմն պատկերի առաջի աչաց մերոց ընծայեն : Վարմինս մեր փոխեսցի բնութեամբ, փոխեսցի և յանուանէն նաև դիակն անգամ . ոչ յերկարատե ինչ մնայցէ նմա, ասէ Տերտուղիանոս, դիակն՝ որ դեռ ևս զմարդկային ինչ յանձին իւրում ցուցանէ մեզ կերպարան, և ահա այնուհետեւ յեղու դառնայ յայն ինչ զոր լեզու մարդկեղէն չգիտէ կոչել . այնքան ճշմարտեալ եթէ ամենայն ինչ զրաւեալ մեռանի 'ի նմա, մինչև չմնալ նմա և ոչ այն իսկ որով թշուառական նշխարք մնացուածոց նորս նշանակեալ լինիցին : „

ՊՈՍԻԷ

Սաքս մարաշախտը և իր մահարձանը :

Տրեղտա քաղաքին մէջ ծնաւ Սաւրիտիոս (Սորիս) Սաքս մարաշախտը 1696^ն, և իրեն ծնողքն էին Լէգոստոս Բ Էհաց թագաւորն ու Սաքսոնիոյ կայսրընտիրը, և Վէնիկսմարքի կոմսուհին : Սաւրիտիոս՝ տղայ հասակէն զինուորական հրահանգաց մէջ վարժելով, նշանաւոր եղաւ Ի իլ (1708) և Սուլուէ (1709) քաղաքաց պաշարման ատեն, և Սալիլաքէի պատերազմին ահաւոր և անլուր կոտորածին մէջ՝ անանկ անխուով ցրտութիւն մը ցըցուց՝ որ միայն բազմաժամանակեայ փորձառութեան արգասիք կրնար սեպուիլ : Կը զարմանար Շուեթաց Կարոլոս ԺԲ թագաւորին վրայ, և երբոր Սթրալսունտի պատերազմին մէջ ականատես եղաւ անոր կարգէ դուրս քաջութեանը, այնպիսի սէր և մեծարանք մը ունեցաւ վրան՝ որ իր զինուորական կեանքը անոր նմանցընել ուզէր :

Սաւրիտիոս իր քաջութիւններովը սիրտ առած՝ Սաճառստան գնաց, Լեգինէոս իշխանին դրօշուն տակ զինուորելու . և այն ատենէն սկսաւ գաղղիական ազգին հակամիտութիւն մը ունենալ . ուստի երբոր քիչ ժամանակէն ետքը Սարիզ եկաւ, Վաղղիացւոցմէ մեծ ընդունելութիւն գտաւ : Նյն ատենէն սկսաւ Սաւրիտիոս մասնաւոր ջանքով մը զինուորական արուեստի հմտութեանէ ըլլալ, և պատերազմաց հրահանգքը նորանոր պիւտերով զարդարել և ճոխացընել :

Էհաց Լէգոստոս թագաւորին ու Նինա Լանուշա մեծին Պետրոսի դրստերը պաշտպանութեամբը՝ Վուրլանտիոյ դուքս անուանեցաւ Սաւրիտիոս . բայց ետքը իր այս նոր իշխանութեան իրաւունքները պաշտպանելու համար ստիպուեցաւ Ռուսաց և Էհաց հետալ կռուիլ . ու չկրնալով անոնց դէմ դնել, ստիպուեցաւ Վաղղիա անցնիլ, և այն ազգին՝ որուն ձեռքով իր մեծութիւնը ստացեր էր, օգնութեանը ա-